

ԻՐԱՎԱՆԱՆՏՈՒՄՆԵՐ

Բաժինը ներառում է ԼՂՀ ՆԳՆ տվյալները հանցագործության վիճակի մասին, այդ թվում՝ առավել վտանգավոր և տարածված հանցագործություններն ըստ առանձին տեսակների: Ներկայացվում է տեղեկատվություն հանցագործություն կատարած անձանց մասին, նրանց բնութագիրն ըստ սեռի, տարիքի, սոցիալական դիրքի: Ըստ ԼՂՀ արդարադատության պետարչության տվյալների, ներկայացված է տեղեկատվություն դատապարտվածների թվաքանակի, նրանց կազմի մասին, ըստ պատժի հիմնական չափերի դատապարտվածների բաշխման մասին:

Հանցագործությունը սոցիալ-իրավական երևույթ է, որը ներառում է որոշակի տարածքում որոշակի ժամանակաշրջանի ընթացքում կատարված հանցանքը բնութագրելով քանակական և որակական ցուցանիշներով:

Գրանցված հանցագործությունները բացահայտված և պաշտոնապես գրանցված քրեական օրենսդրությամբ սահմանված հասարակական վտանգավոր գործողություններն են:

Հանցագործություն կատարած բացահայտված անձանց թվաքանակը ներքին գործերի մարմինների կողմից պաշտոնապես հաշվառման կանգնած անձինքն են, որոնց համար բացված են քրեական գործեր:

Դատապարտվածներն անձինք են, որոնց հանդեպ դատարանների կողմից ընդունված են օրինական ուժ ստացած դատապարտման վճիռներ:

Դատապարտվածների կազմը դատապարտվածների ընդհանուր թվաքանակի բաշխումն է ըստ կատարած հանցագործությունների տեսակների:

76. ԳՐԱՆՑՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ

	1995	1996	1997	1998	1999
Ընդամենը գրանցվել են հանցագործություններ	458	381	427	377	493
դրանցից՝					
կանխամտածված սպանություն և մահափորձ	17	13	5	5	8
կանխամտածված ծանր մարմնական վնասվածք բռնաբարություն և բռնաբարության փորձ	2	6	19	10	9
գողություն	144	130	172	114	151
թմրադեղերի հետ կապված հանցագործություններ	--	7	9	11	8
խուլիգանություն	15	23	19	36	44
ճանապարհատրանսպորտային պատահարներ					
մահացու ելքով	--	5	10	5	7
ապօրինի զենքի կրում	--	30	27	14	24

77. ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԺ ՍՏԱՑԱԾ ԴԱՏԱՎՃԻՌՆԵՐՈՎ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾՆԵՐԻ ԹԻՎՆ ԸՍՏ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՄԱԿՆԵՐԻ

(մարդ)

	1996	1997	1998	1999
Ընդամենը դատապարտված	532	613	495	563
նրանցից՝				
կանխամտածված սպանության և մահափորձի պատճառով	7	9	9	5
կանխամտածված ծանր մարմնական վնասվածքների պատճառման համար բռնաբարություն և բռնաբարության փորձ կատարելու համար	31	13	8	3
զորթում	2	-	2	3
գողության համար	176	118	87	100
թմրադեղերի հետ կապված հանցագործությունների պատճառով	31	15	10	20
խուլիգանության համար	10	9	7	21
չարամիտ խուլիգանության համար	12	9	24	28
առանձնապես չարամիտ խուլիգանության համար	4	-	1	6
տրանսպորտային միջոցների շահագործման և երթևեկության անվտանգության կանոնների խախտումների պատճառով	17	25	26	23
զինվորական հանցագործություններ	9	-	240	215